# «ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

_

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 64-րդ հոդվածում, ինչպես նաև Օրենսգրքի մյուս հոդվածներում «Անտառային ֆոնդի հողեր» բառերից հանել «ֆոնդ» բառը:

**Հոդված 2.** Օրենսգիրքի 64-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 3.** Օրենսգրքի 65-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ, նոր խմբագրությամբ՝

**«ՀՈԴՎԱԾ 65. ՀԱՏԱՏԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԲՆԱՓԱՅՏԻ ՄԹԵՐՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԲԵՐՄԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԸ ԽԱԽՏԵԼԸ, ԱՊՕՐԻՆԻ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՆՏԱՌԱՆՅՈՒԹԸ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ**

Հատատեղի օգտագործման, բնափայտի մթերման ու դուրսբերման սահմանված կարգը խախտելը, ապօրինի ձեռք բերված անտառանյութը տեղափոխելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝

երկուհարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 73-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկի չափով:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 74-րդ հոդվածի երկրորդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսնապատիկի չափով:»:

**Հոդված 5.** Օրենսգրքի 75-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.
«Հոդված 75. Անտառները կենցաղային մնացուկներով և թափոններով աղտոտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրապատիկի չափով:»:

**Հոդված 6.** Օրենսգրքի 79-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ, նոր խմբագրությամբ՝

**«ՀՈԴՎԱԾ 79. ՀՐԿԻԶՄԱՆ ԿԱՄ ԿՐԱԿԻ ՀԵՏ ԱՆՓՈՒՅԹ ՎԱՐՎԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԾԱՌԵՐԸ, ԹՓԵՐԸ, ՄԱՏՂԱՇԸ ԵՎ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԸ ՈՉՆՉԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՎՆԱՍԵԼԸ**

Հրկիզման կամ կրակի հետ անփույթ վարվելու հետևանքով անտառներում ծառերը, թփերը, մատղաշը և մշակաբույսերը ոչնչացնելը կամ վնասելը, ինչպես նաև անտառների հակահրդեհային կանոնները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ երկուհարյուրհիսնապատիկի չափով:»: